

Հայ-Եկեղեցեաց մէջ փոխանակ Պարսկական, Յունական, Տաճկական և այլն եղանակաց անձա՛հ խառնուրդի, թագաւորէր Հայկական բնիկ բարեպաշտական զգացմանց յարմար եւ վայելուչ եղանակն :

Մ Ա Ն Ա Ն Ա Յ

ԺՈՂՈՎԵԱՅ ԵՒ Ի ԼՈՅՍ ԷԱԾ

Գ. Վ. ՍՐՈՒԱՆՉՏԵԱՆՑ

Սա կը բաղիանայ շնք թերթ հատիկներէ , քանակութեամբ նուազ , այլ տեսակաւ եզական , համովն ու հոտով աննման , վասն զի բազմաձաշակ և բազմաբոյր է : Սա Արաբիոյ մեռելատիպ , տոթակէզ և հիւրամերժ անապատաց մէջ չէ զանգուած , այլ հովասունն եւ օդատունն Հայաստանի ծաղիօդոց լեբանց , ջրալեր հովտաց , մարգաց եւ դաշտաց մէջ . Հայաստանի ծաղիանց մեղրով , զուարթարար շաղով ու ցողով և Հայոց արեգական բարեխառն ճառագայթներով շաղուած ու զանգուած է : Սորա մէն մի հատիկ Հայոց երկրին բազմաղղի սլրտողոց համն ու հոտն ունի , մէն մի պատառիկ Հայոց կենաց , սովորութից , բարուց և աւանդութեանց ծրագիրն է . և մէն մի թերթիկ ազգային հընամի և հնարմատ նախապաշարմանց , առասպելաց , գիւթիւթեանց և հմաշից պատկերն կ'ուրուագրէ . վերջապէս ՄԱՆԱՆԱՅՆ ըստ ամենայնի Հայաստանն ու Հայը կը պատկերէ :

Սինայ Անապատին Մանանայն ուրախութեամբ և գոհութեամբ կը ճաշակէին Իսրայէլն այն որդիները , ուրոնք Աւետեաց երկրին սիրովն ու հըրով կը վառէին . անտրտունջ կը ժողովէին նոքա , որք խոստացեալ երկրին

կարօտանօք , ազատութեան կենսաբոյր բոցով կը տապանային . խակ ընդհակառակն նոքա , որոց սիրան ու հոգին Եգիպտոսի զաղլութեամբ , գարշութեամբք , մոլութեամբքն ու մոլութեամբք շաղախուած էին , Եգիպտոսի սոխն ու սխտոր առաւել կը համարէին քան զմանանայն երկնածիր . Եգիպտոսի սեխն ու միս հանգերձ գերութեամբ առաւել կընտրէին քան զհաց երկնատեղաց եւ նուիրական , քան զհաց ազատութեան :

Այսպէս ալ Հայաստանի վարատական և ցրուեալ որդիներէն անոնք , որք հայրենեաց կաթոգին սիրով , հայրենեաց յիշատակաց և սովորութից , ազգային գեղեցիկ բարուց և յատկութեանց տարփանօք կ'այրին և կը ձեն ձերին օտար հողի և օտար արիանց վերոյ , անձանօթ աստեղաց և արեգակի տակ , անսովոր կլիմայի և մթնոլորտի մէջ , նոցա համար հայրենեաց ՄԱՆԱՆԱՅՆ քաղցր , սուրբ և նուիրական է : Ճաշակեցէք ուրեմն , անյագ ճաշակեցէք Մանանայն , հայրենասէր հորդիներ , ձեր քմսոց անսովոր և խորթ չը պիտի թուի այդ . վասն զի ամեն Հայու բնական և սովորական կերակուրն է , ձեր մայրական կաթն է : Օտարին գրական բազմազան և համադամ խորտիկներ չեն պարարեր Հայուն սիրտն ու միտք . օտարին մեղրն ու շաքար չեն քաղցրացներ մեր քիմքն ու ճաշակ . օտարին ականակիտ ջուրերն չեն զովացներ մեր հոգւոյն տապն ու բոց որչափ քան զպղտոր ջուրն Հայոց . օտարինը միշտ օտար է և կ'օտարացընէ : Ճաշակեցէք և պատմեցէք ՄԱՆԱՆԱՅԻՆ համն ու հոտ անոնց , որք յաւէտ օտարին սիրայար միշտ տրտունջ կ'ընեն , թէ Հայոց կեանքն անսլրտուղ է . Հայոց դաշտերն կորդ և ասպէր . սակայն ո՛վ մշակեց Հայոց

կեանքը, որ չը ծաղկեցաւ . ո՛վ արորաւ
 զրեց Հայոց դաշտերն, որ չը պողաւ
 բերեցան : Ահա՛ ՄԱՆԱՆԱՅԻՆ ժողո-
 վող անվտասակ ձեռքերը ո՛չ թէ արու-
 րով, ո՛չ թէ գուլթանով, այլ Բրլը՛ սա-
 կաւ ինչ քրքրեց հայրենեաց հողերն
 ու քարեր, գրոյն արտադրեցաւ, հո-
 ղերն ամեն՝ յակինթ ու մարգարիտ,
 քարերն՝ քնար փոխեցան :

Քաջալերեմք ուրեմն այսպիսի մը-
 չախներն, քաջալերեմք ընթերցասիրու-
 թեամբ և նիւթական ձեռնտուու-
 թեամբ, որ իրենց բրիճն խոր և արոր
 դառնայ, որպէս զի հերկեն երկար
 դարերէ՛ ՚ի վեր խոսքան ու կորգ մնա-
 ցած Հայոց կեանքը, ակոսարեկ պա-
 տառեն, որպէս զի արեւ ու լոյս տես-
 նեն Հայոց կենաց թանկագին մնացորդ-
 ները : Մէք եւս երկնից զօրութիւնն
 ու վարձը կը մաղթեմք Հայոց գրչին
 և բրլին փայլ ու սայր տուող Արժ .
 Հօր . երկար կեանք և արեւ կը մաղ-
 թեմք Հայաստանի ՄԱՆԱՆԱՅԻՆ ա-
 րեւ տուող Հօր, որպէս զի շարունակ
 հերկէ և բրէ հայրենեաց հօյն . հոսէ
 հայրենեաց ջրերն, գետերն և լճերը,
 եւ աննոց մէջի հնութեան « հրեղէն
 աղջիկներն » ՚ի տես բերէ գիտու-
 թեանց աշխարհին . վեր ՚ի վայր շրջէ
 Հայոց լեռներն ու քարերը, որ խօսին
 և ամեն կողմ հռչակեն Հայոց դիւցազ-
 նական կեանքն ու շահատակութիւնք
 որոց հազարաւոր տարիներ հանդիսա-
 տես վկայներ եղան :



Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ք

Քաղաքիս մէջ գողութիւնները շատ
 հաղուադէպ էին, սակայն դժբաղդա-
 բար մօտ ատեններս սկսան յաճախել .
 ինչպէս ամսոյս ջին հրէայ վսճառական
 մի իւր խանութը բանալով կը տեսնէ

որ անտուկը կտորած և մէջը գտնուած
 60 ոսկին գողուած է . թէ և անմիջա-
 պէս Կ սուավարութեան իմաց կը տայ,
 սակայն ցարդ ո՛չ գողն և ո՛չ գողոնը ե-
 րեւան ելան : Նոյնպէս այլ եւս երեք
 մասնաւոր գողութիւններ տեղի ունե-
 ցան . երկու անգամ տուներու և եր-
 րորդին նպարավաճառի մը խանութը :

— Անցեալ ամսոյ 29 էն սկսեալ քա-
 ղաքիս մէջ ժողովուած 800 ի չափ Ռէ-
 փիֆերը ամսոյս 12 ին ղինուորական սըր-
 տառուչ հանդիսիւ և նուագերգու-
 թեամբ մեկնեցան քաղաքէս ՚ի Յոպպէ :
 Նոյնչափ եւս Քաղաքէն : 20 ին Օսմա-
 նեան պատերազմիկ շոգենաւ մը գա-
 լով և 1600 Ռէփիֆերը առնելով հե-
 տեւեալ օրը մեկնեցաւ :

— Ռէտիֆները ժողովուած միջոցին
 գեղացի կին մի լսելով որ իւր եղբայրն
 ևս առնուած է, կը սկսի սաստիկ կեր-
 սով լալ և սրտի կսկիծէն կամ լսւ ևս
 է ասել կատաղութենէն, գիրկն եղած
 9 ամսեայ երախայն գետին կը նետէ :
 Ապա մանկան լացը փոխանակ մայրա-
 կան սէրն ու կարեկցութիւնը շարժե-
 լու, աւելի զայրոյթը կը բորբոքէ . ուս-
 տի մանկան կուրծքն բանալով սրտին
 բռնցի հարուածներ կը տայ, որով խեղճ
 և անմեղ մանկիկը կէս ժամէն հոգին
 կ'աւանդէ :

Մայրական տգիտութեան և ան-
 դթութեան արդեօք այսպէս քանի՛
 անմեղ զոհեր եղած են և սխալ ըլլան
 նիւթապէս կամ բարոյապէս :

— Յունաց Քիրիլոս Պատրիարքի ան-
 կումէն ՚ի վեր Տեղական Արաբացի
 Յոյնք, իրենց քահանայից, աղբատաց
 եւ դպրոցի ծախուց համար Ռուսաց
 Տէրութենէն տարեկան 8000 ոսկի կ'ըն-
 դունին, զոր Միաբանութեան և տե-
 ղացուց մէջ եղած խռովութենէն ա-
 ռաջ, Միաբանութիւնը կ'ընդունէր :
 Դպրոցը բաւական յառաջադէմ վի-